



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«05» մարտ, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 06-Ա/Ք

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 51-Ա  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի «Գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգերը հաստատելու և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի մայիսի 18-ի N 13-Ա/Ք և 2012 թվականի մայիսի 24-ի N 14-Ա/Ք հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 51-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները.

1) N 1 հավելվածի նախաբանը՝ «մրցույթի» բառից հետո լրացնել «, գիտության ոլորտի զարգացման խնդիրների, հեռանկարների քննարկման, ինչպես նաև գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող և համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով միջոցառման կազմակերպման» բառերով,

2) N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով.

«13. Գիտության ոլորտի զարգացման խնդիրների, հեռանկարների քննարկման, ինչպես նաև գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող և համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով միջոցառման կազմակերպման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հիմք է հանդիսանում միջոցառման կազմակերպչի պաշտոնական գրությունը՝ համապատասխան հիմնավորմամբ և/կամ այդ մասին ընդունված իրավական ակտը:

14. Գիտության ոլորտի զարգացման խնդիրների, հեռանկարների քննարկման, ինչպես նաև գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող և համագործակցության զարգացմանը նպաստելու միջոցառման կազմակերպման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին իրավական ակտն ընդունվելուց հետո տասնօրյա ժամկետում Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին տրվում է համապատասխան հանձնարարական, որտեղ նշվում է միջոցառման նախաձեռնող (կազմակերպմանն աջակցող) Կազմակերպության անվանումը և վերջինիս հետ կնքված պայմանագրի գինը՝ սահմանված կարգով ֆինանսավորումն ապահովելու համար:

15. Գիտության ոլորտի զարգացման խնդիրների, հեռանկարների քննարկման, ինչպես նաև գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող և համագործակցության զարգացմանը նպաստելու միջոցառման ավարտից հետո տասնհինգօրյա ժամկետում միջոցառման նախաձեռնող (կազմակերպմանն աջակցող) Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն (Կոմիտեի կողմից տրամադրված միջոցներով ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ծախսերը հավաստող փաստաթղթերի պատճենները):»:

**ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ**